

# ՆԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Ուսումնասիրության համակարգող,  
ՆՆ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի անդամ՝**

**Ս. ԱՐԱԲԱԶՅԱՆ**

**Ուսումնասիրության համակարգող,  
ՆՆ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի անդամ՝**

**Մ. ԿՈՇԵՅՅԱՆ**

**Լիցենզավորված գործունեության  
մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի  
վարչության պետ՝**

**Մ. ԶԱԼԱԼՅԱՆ**

**ՆԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ՝**

**Աշխատանքային խմբի ղեկավար,  
ԼԳՄ վարչության տեխնիկական  
մոնիթորինգի և փորձաքննության բաժնի պետ՝**

**Ն. ԾԱՏՈՒՐՅԱՆ**

**Սպառողների հետ կապերի բաժնի պետ՝**

**Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԼԳՄ վարչության տեխնիկական  
մոնիթորինգի բաժնի գլխավոր  
մասնագետ՝**

**Ս. ՍԱՆԱԿՅԱՆ**

**ԼԳՄ վարչության տեխնիկական  
մոնիթորինգի բաժնի առաջատար  
մասնագետ՝**

**Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

**ԼԳՄ վարչության տեխնիկական  
մոնիթորինգի բաժնի առաջատար  
մասնագետ՝**

**Կ. ԱՍԱՏՐՅԱՆ**

**ԼԳՄ վարչության տեխնիկական  
մոնիթորինգի բաժնի առաջատար  
մասնագետ՝**

**Ա. ՆՈՎՍԵՓՅԱՆ**

**ՍԶՎ սակագնային բաժնի առաջատար  
մասնագետ՝**

**Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՆԵՏԵՎՅԱԼ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

**«Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների  
միություն» Ն/Կ նախագահ՝**

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

**«Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների  
միություն» Ն/Կ անդամներ՝**

**Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ**

**Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**«Մշակույթի աջակցության և ռազմավարության  
հայկական կենտրոն» Ն/Կ անդամ՝**

**Ն. ՂԱՐԱԲԵԿՅԱՆ**

**«Նասրական պաշտպանների միություն»  
Ն/Կ անդամ՝**

**Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**«Նամարիրությունների միության ասոցիացիա»  
Ն/Կ անդամ՝**

**Ն. ԹՈՐՈՍՅԱՆ**

**«Սպառողների իրավունքների պաշտպանության  
միություն» Ն/Կ անդամ՝**

**Կ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ**

**«Սպառողների միություն» Ն/Կ անդամներ՝**

**Ս. ԶԱՂԻՆՅԱՆ**

**Ա. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նաշվեպլություն Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մաքակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարման ուսումնասիրության վերաբերյալ	էջ          6
Ընդհանուր տեղեկություններ	6
Ուսումնասիրության պլանավորումը	6
Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող փարածքներում իրականացված մոնիթորինգի արդյունքները ըստ մասնաճյուղերի	16
« Կենտրոն» մասնաճյուղ	19
«Նյուսիս» » մասնաճյուղ	22
«Մաշտոց» մասնաճյուղ	25
«Քանաքեռ-Զեյթուն» մասնաճյուղ	28
«Արտաքաղաքային» մասնաճյուղ	31
«Էրեբունի» մասնաճյուղ	33
«Շահումյան» մասնաճյուղ	36
«Շենգավիթ» մասնաճյուղ	40
«Արաբկիր» մասնաճյուղ	43
Զրամաքակարարումն ապահովելու համար օգտագործվող բակային պոմպեր	45
Եզրակացություններ	47
Առաջարկություններ	.....
Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մաքակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները	.....

# ՆԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆԻ «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ –Ի ԿՈՂՄԻՑ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՆՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի կապարումն ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի դեկտեմբերի 24-ի №175Լ որոշմամբ հասարակած 2005 թվականի փարեկան աշխատանքային ծրագրի 25-րդ կետի՝ սույն թվականի հուլիսի 12-ից մինչև սեպտեմբերի 15-ը հանձնաժողովի նախագահի 11.07.2005թ. №099-ՆՆ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ընկերությունում ուսումնասիրվել է 2004 թվականի ապրիլի 30-ին հանձնաժողովի կողմից ընդունված՝ Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կապարումը (հավելված 1 ):

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն իր մեջ ներառում է կենտրոնական գրասենյակը, Երևանը սպասարկող 8 մասնաճյուղերը, արտաքաղաքային մեկ մասնաճյուղ, որն իր մեջ ընդգրկում է Երևանին հարող 25 գյուղեր, «Ջրառ» մասնաճյուղը և կոյուղաջրերի մաքրման մեկ կայան՝ «Աերացիա»: Ընկերությունն ունի 10 քլորացման կայան, 4 պոմպակայան, օրվա կարգավորիչ 23 ջրամբար: Ջուրը Երևան է հասցվում թվով 12\* աղբյուրներից. դրանք են՝ Արզնի, Գեղամեջ, Արզական, Գյումուշ, Արարատյան, Ապարան, Գառնի, Երիեկ, Ձորաղբյուր, Ծարավաղբյուր, Շոր-շոր և Կաթնաղբյուր: Ընկերության փնօրինման ներքո առկա են 720 կմ արտաքաղաքային ջրափար, 220 կմ արտաքաղաքային կոյուղափար, 1925 կմ ներքաղաքային ջրագիծ, 950 կմ ներքաղաքային կոյուղագիծ: Ընկերությունն սպասարկում է **318310** բաժանորդների, որոնցից **306194**-ը՝ բնակիչ -բաժանորդներ, իսկ **12116**-ը այլ բաժանորդներ (բյուջեարային և այլ):

- Գեղամեջ և Արզնի, Գյումուշ և Արզական աղբյուրների ջրերը քլորացվում են երկու քլորացման կայաններում

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Նամաձայն հանձնարարականի՝ ուսումնասիրության գործընթացում ներգրավվել են ՆՏ ջրային փնօրինության պետական կոմիտեի, ՆՏ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային փնօրինության, «Նասարակական պաշտպանների միություն»,

«Բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների միություն», «Սպառողների միություն», «Մշակույթի աջակցության և ռազմավարության հայկական կենտրոն», «Սպառողների իրավունքների պաշտպանության միություն» և «Նամապիրությունների միության ասոցիացիա» հասարակական կազմակերպությունները, որոնց հետ նախապես քննարկվել է ուսումնասիրությունների ծրագիրը և ժամանակացույցը (հավելվածներ 2, 3):

Ուսումնասիրություններն իրականացվել են Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կենտրոնական գրասենյակում, բոլոր 9 մասնաճյուղերում և ընկերության կառուցվածքային սպորաբաժանում հանդիսացող քիմիկամանրէաբանական լաբորատորիայում: Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մաքակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կարարման այս ուսումնասիրությունը ՏՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվում է արդեն 3-րդ անգամ, որն իր ընդգրկած ծավալներով և իրականացման ձևով զգալիորեն փարբերվում է նախորդներից (առաջին մոնիթորինգը՝ 2004թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 8-ը, երկրորդը՝ 2004թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 10-ը): Ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչական լինելն ապահովելու նպատակով, յուրաքանչյուր մասնաճյուղում, ըստ հնարավորության ուսումնասիրությունը կատարվել է կամ հիմնական ջրագծերի ուղղություններով կամ ըստ գրաֆիկի համընկնող փարածքներով՝ հիմք ընդունելով մասնաճյուղերում, ԵԶԿ-ի կենտրոնական գրասենյակում և քաղաքապետարանի 1-08 ծառայությունում սրացված, ինչպես նաև ԶԼՄ-ներում և հանձնաժողով դիմած բնակիչ-բաժանորդների՝ ջրամաքակարարման վերաբերյալ բողոքներն ու ահազանգերը՝ թվով 591: Մասնաճյուղերի ղեկավարության հետ համարեղ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնցում գրանցված բողոքների և ընտրված այլ հասցեներում (բազմաբնակարան շենքեր և առանձնաբնակարաններ) կատարված հարցումների արդյունքները՝ ընդգրկելով մասնաճյուղի ամբողջ փարածքը և բնութագրական լինելով մասնաճյուղի համար, թույլ կտա իրափեսական եզրահանգումներ կատարել: Յուրաքանչյուր մասնաճյուղի համար կազմվել է հարցման արդյունքների ամփոփ աղյուսակ՝ բաժանորդների հեռախոսահամարներով: Այնուհետև հարցման արդյունքները ճշգրտվել են փարբեր օրերին կատարված հեռախոսազանգերի միջոցով: Սրացված տեղեկատվության վերլուծության հիման վրա առանձնացվել են այն հասցեները, որտեղ ջրամաքակարարումը կարելի է համարել «խրոնիկ» վատ, ինչի մասին մոնիթորինգի ընթացքում գրավոր տեղեկացվել են մասնաճյուղերը: Յուրաքանչյուր մասնաճյուղի կողմից ջրամաքակարարման գրաֆիկի վերականգնմանն ուղղված աշխատանքների արդյունքները ներկայացված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Ուսումնասիրության համար ընտրվել է բնակիչ-բաժանորդների **473** հասցե, որոնք էլ ներառվել են աղյուսակներում: Այդ աղյուսակներում գրանցվել են նաև հետադարձ կապով բնակիչների հեռախոսային հարցումներից ստացված փեդեկավարությունը (հավելվածներ 3-11): Զրամապակարարման գրաֆիկի պահպանման փվյալները բերված են աղյուսակ 1-ում:

**ԶՐԱՄԱՍԿԱՐԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿԻ ՊԵՏՊԵՆՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ**

**աղյուսակ 1**

Անվանումը	Ընդամենը դիտարկված հասցեների քանակը	Նամակապատ խանում է գրաֆիկին		Չի համապատասխանում գրաֆիկին				Շուրջօրյա գրաֆիկ					
				ընդամենը		այդ թվում 4 ժամից պակաս ջրամապակարարմամբ		դիտարկված հասցեներ	Շուրջօրյա գրաֆիկին համապատասխանում է			Շուրջօրյա գրաֆիկին չի համապատասխանում	
1	2	3		4		5		6			7		
ԵԶԿ ՓԲԸ	473	Քա նակ	%	Քա նակ	%	Քա նակ	%	Քա նակ	Քա նակ	%	Քա նակ	%	
				235	49.68	238	50.32	53	11.2	157	85	54.14	65*

\* Շենգավիթ մասնաճյուղում 7 բաժանորդ հեռախոսազանգերին չեն պատասխանել, գրաֆիկի համապատասխանությունը չի ճշգրտվել

Ընկերության կողմից ջրամապակարարման գրաֆիկներն առաջին անգամ հրապարակվել են «Ազգ» թերթի 2004 թվականի հուլիսի 8-ի և 9-ի համարներում, որոնցում կատարված լրացումները և փոփոխությունները հրապարակվել է նույն թերթի 2004 թվականի հոկտեմբերի 30-ի համարում: Վերջին անգամ գրաֆիկները լրացումներով և փոփոխություններով հրապարակվել է «Ազգ» թերթի 2005 թվականի ապրիլի 26-ի համարում (հավելված 4): Ընդ որում ընկերության կողմից փեդեկանք է ներկայացվել նաև այն մասին (22.07.2005թ. №41/01-1102), որ 2005 թվականի ապրիլի 26-ին մամուլում հրապարակված ջրամապակարարման գրաֆիկներում նոր փոփոխություններ չեն կատարվել (հավելված 5), իսկ գրաֆիկի ժամանակավոր փոփոխությունների մասին սպառողներին իրազեկում են համապատասխան մասնաճյուղերը՝ իրազեկման հնարավոր այլ միջոցներով:

Սակայն գրաֆիկների անհամապատասխանության արձանագրված 238 հասցեներից 116-ը կրում է փակակա (խրոնիկ) բնույթ՝ այն է գրաֆիկի չհայտարարված փոփոխություն, որոնց մասին գրավոր փեդեկացվել են մասնաճյուղերը: Ըստ մասնաճյուղերից ստացված փեդեկանքների, **82** հասցեների ջրամապակարարումը



մոնիթորինգի ժամկետի ավարտին համապարասխանեցվել է գրաֆիկներին, մնացած 34 հասցեներում ջրամարակարարման գրաֆիկները շարունակվում են խախտվել:

Այս առումով անընդունելի ենք համարում ինչպես գրաֆիկների անհիմն փոփոխությունը, այնպես էլ փոփոխության պարագայում բնակչությանը այդ մասին չիրազեկելը և օրենսդրությամբ սահմանված կարգով համապարասխան քայլեր չձեռնարկելը:

Մոնիթորինգի ընթացքում կատարված հարցումները ցույց տվեցին, որ գրաֆիկների և դրանց փոփոխությունների մասին բաժանորդներին միայն թերթում հրատարակման միջոցով իրազեկելը արդյունավետ չէ:

Նամենապրական վերլուծություն է կատարվել Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի 2004-2005թ.թ շուրջօրյա ջրամարակարարման վերաբերյալ, որի արդյունքները բերված են աղյուսակ 2-ում.

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՐՋՕՐՅԱ  
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

աղյուսակ 2

№	Մասնաճյուղի անվանումը	2005թ.			2004թ.
		Բնակիչ-բաժանորդների քանակը	Շուրջօրյա ջրամարակարարում ունեցող բնակիչ-բաժանորդներ		Շուրջօրյա ջրամարակարարում ունեցող բնակիչ-բաժանորդներ (%)
			քանակը	%	
1	2	3	4	5	8
1	«Նյուսիս»	51711	35689	69,0	70,6
2	«Մաշտոց»	40168	27120	67,5	42
3	«Արաբկիր»	42496	33630	79,2	70,9
4	«Քանաքեռ-Զեյթուն»	21506	8011	37,2	24
5	«Կենտրոն»	35 538	17341	48,7	35
6	«Էրեբունի»	29355	22320	76,1	67
7	«Շահումյան»	34274	27563	80,9	45,6
8	«Շենգավիթ»	34485	21350	62,0	61,5
9	«Արտաքաղաքային»	16661	2643	15,9	30
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>		<b>306194</b>	<b>195667</b>	<b>64</b>	<b>56.5</b>

Ուսումնասիրության ընթացքում շուրջօրյա ջրամաքակարարում ունեցող 157 հասցեներից 65-ում՝ 41.4 %-ում, գրաֆիկը խախտվել է: Գիտակցելով, որ նախապես, բողոքների հիման վրա ընտրված հասցեների ուսումնասիրման ցուցանիշը չի կարող բնութագրական լինել ընկերության ամբողջ փարածքի համար, այնուամենայնիվ գտնույն ենք, որ ընկերության ներկայացրած 64% (195667 բաժանորդ) ցուցանիշը չի համապատասխանում իրականությանը:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.04.2004թ. №43Ն որոշման 2-րդ կետում ամրագրված փարածքներից, որոնցում բնակվող բաժանորդների ջրամաքակարարումը պետք է համապատասխանեցվեր նվազագույն պահանջներին 2005թ. հունվարի 1-ից, բարելավվել է միայն Սարի թաղի 3-25-րդ, Լեփսիուսի, Յան Ռայնիսի, Գոգոլի, Մ. Ավետիսյանի, Դրոյի փողոցների, Սարկավազի փողոցի բարձրահարկ շենքերի, Զովունի և Քանաքեռական համայնքների ջրամաքակարարումը: Ընդ որում վերը նշված բոլոր հասցեները ներառված են ջրամաքակարարման գրաֆիկների հրապարակված փոփոխություններում:

Այդ ցուցակից Գառնի, Եղվարդ, Զրաշեն և Մուշական համայնքների, ինչպես նաև Անդրֆեդերացիայի 2-րդ փակուղու ջրամաքակարարումը չի համապատասխանեցվել նվազագույն պահանջներին: Այս կապակցությամբ հանձնաժողովի հասցեով ստացվել է Երևանի «Զրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Գ. Ալեքսանյանի 20.07.2005թ. №41/01-1093 գրությունը, որտեղ նշված է, որ ներկայումս վերոհիշյալ համայնքներում տեխնիկական պարճառներով հնարավոր չէ ապահովել նվազագույն պահանջներին համապատասխան ջրամաքակարարում (հավելված 6): Կրկին անգամ նույն հարցի կապակցությամբ պարոն Գ. Ալեքսանյանից գրություն է ստացվել նաև 2005թ. օգոստոսի 8-ին (№41/01-1302): Ընդ որում պարոն Ալեքսանյանը խնդրում է այդ համայնքների ջրամաքակարարման վերաբերյալ փոփոխություն մտցնել նաև ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.04.2004թ. №43Ն որոշման 2-րդ կետում (հավելված 7): Այս կապակցությամբ հանձնաժողովը 18.08.2005թ. № ՆԳ-806Լ գրությամբ դիմել է ՆՏ ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ նրա դիրքորոշումը պարզելու համար (հավելված 8): Մակայն առ այսօր պատասխան չի ստացվել:

Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ բնակիչները, որպես կանոն, չեն տեղեկացվում վթարների և դրանց վերացման հնարավոր տևողության մասին: Մասնաճյուղերն ունեն վթարների և բողոքների գրանցամատյաններ, որտեղ գրանցված չեն վթարի գրանցման ժամանակը և վթարը վերացնելու ժամկետներն ու ավարտը: Որոշ դեպքերում չեն նշված, թե վերացված է արդյոք վթարը, թե ոչ: Բողոքների դեպքում չի ապահովվում հետադարձ կապը, քանի որ գրանցման մատյաններում չկան բողոքող բաժանորդների հեռախոսահամարները:

Բոլոր մասնաճյուղերում բողոքների և ահազանգերի գրանցամատյաններից պարզենահանվել են հունիս-հուլիս-օգոստոս ամիսների փեղեկավորությունը, որոնցից էլ ընտրվել են այն հացեները, ուր այցելություններ են կատարվել:

Բաժանորդների մոտ ուսումնասիրվել է մնացորդային քլորի առկայությունը խմելու ջրում: Բոլոր հասցեներում նմուշառված ջրերում առկա էր մնացորդային քլորը, բացի «Արարաքաղաքային» մասնաճյուղի Գառնի համայնքի ջրամատակարարման ցանցից վերցրած նմուշում: Փաստը հաստատվեց նաև մասնաճյուղի ներկայացուցչի կողմից:

Ջրաքանակների ուսումնասիրության համար համեմատական վերլուծության է ենթարկվել ընկերության կողմից հանձնաժողով ներկայացրած 2004-2005թթ. հունվար-հուլիս ամիսների աճողական ջրային հաշվեկշիռները (աղյուսակներ 3, 3.1)

**Ընկերության մասնաճյուղերի 2004-2005թ.թ հունվար-հուլիս ամիսների աճողական ջրային հաշվեկշիռը ըստ ընկերության կողմից ներկայացված հաշվեկշիռային տվյալների**

աղյուսակ 3

№	Մ/Ճ	2005թ						2004թ.					
		Մուտք (հազ.խմ)	Նաշվ. ջրաքանակ (հազ.խմ)	Կորուստ		Բաժանորդների մոտ հաշվառվ. ջր (հազ.խմ)		Մուտք (հազ.խմ)	Նաշվ. ջրաքանակ2 (հազ.խմ)	Կորուստ		Բաժանորդների մոտ հաշվառվ. ջր (հազ.խմ)	
				%	հազ. խմ	բնակիչ- բաժ.	Այլ			%	հազ. խմ	բնակիչ- բաժ.	Այլ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	<b>Մաշտոց</b>	24651.4	3454.8	86	21196.6	2575.2	879.7	25059.0	3577.69	85.72	21481.3	2788.34	789.25
2	<b>Նյուսիս</b>	21633.8	4030.4	81.4	17603.5	2965.2	1065.2	28340.1	5489.2	80.63	22850.9	4144.3	1244.88
3	<b>Շենգավիթ</b>	19829.1	6519.2	76.7	21453.9	2848.8	3688.4	30505.6	7330.62	75.97	23175.0	3285.57	4045.25
4	<b>Շահումյան</b>	19829.1	3059.0	84.6	16770.1	2384.1	674.9	20066.1	3104.99	84.53	16961.1	2562.18	542.81
5	<b>Արաբկիր</b>	26492.6	5060.3	80.9	21432.3	3903.0	1157.3	26321.5	5523.5	79.2	20798.0	4276.55	1246.95
6	<b>Քան-Զեյթ</b>	14921.9	2670.9	82.1	12251.0	1708.7	9602.3	10403.2	1258.15	87.91	9145.1	757.51	500.64
7	<b>Կենտրոն</b>	24540.5	4976.7	79.7	19563.9	3120.5	1856.1	22094.9	4618.69	79.1	17476.2	2706.01	1911.68
8	<b>Էրեբունի</b>	19585.2	3273.4	83.3	16311.8	2322.8	950.6	22772.4	3256.74	85.7	19515.7	2274.81	981.93
9	<b>Արտաքաղաք</b>	15243.1	3349.4	78.0	11893.7	1526.1	1823.3	15710.1	4220.35	73.14	11489.8	2203.2	2017.15
<b>Ընդամենը</b>		<b>194870.7</b>	<b>36394.0</b>	<b>81.3</b>	<b>158476.8</b>	<b>23354.4</b>	<b>13039.6</b>	<b>201272.9</b>	<b>38379.91</b>	<b>80.93</b>	<b>162893</b>	<b>24998.47</b>	<b>13381.44</b>

**Ընկերության մասնաճյուղերի 2004-2005թ.թ հուլիս ամիսների ջրային հաշվեկշիռը ըստ  
ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունների**

**աղյուսակ 3.1**

№	Մ/Ճ	2005թ						2004թ.					
		Մուտք (հազ.լամ)	Նաշվ. ջրաքանակ (հազ.լամ)	Կորուստ		Բաժանորդների մոյ հաշվառվ. ջր (հազ.լամ)		Մուտք (հազ.լամ)	Նաշվ. ջրաքանակ2 (հազ.լամ)	Կորուստ		Բաժանորդների մոյ հաշվառվ. ջր (հազ.լամ)	
				%	հազ. լամ	բնակիչ- բաժ.	Այլ			%	հազ. լամ	բնակիչ- բաժ.	Այլ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	<b>Մաշտոց</b>	3536.6	534.7	84.9	3001.9	416.02	118.7	3740	810.31	78.33	2929.7	700.43	109.88
2	<b>Նյուսիս</b>	3196.3	654.2	79.5	2542.1	489.03	165.16	3051.9	831.2	72.77	2220.7	694.3	136.88
3	<b>Շենգավիթ</b>	4172.9	963.9	76.9	3209.1	452.38	511.47	4044.3	1527.59	62.23	2516.7	1280	247.57
4	<b>Շահումյան</b>	2806.0	461.9	83.5	2344.1	381.72	16.81	2788.9	586.64	78.97	2202.3	509.22	77.42
5	<b>Արաբկիր</b>	3841.5	803.0	79.1	3038.5	634.3	168.67	3954.0	1416.21	64.18	2537.8	1234.8	181.41
6	<b>Քան-Ջելթ</b>	2076.3	385.7	81.4	1690.6	240.59	145.15	2231.1	387.76	82.62	1843.3	258.15	129
7	<b>Կենտրոն</b>	3861.5	734.1	81.0	3127.4	466.14	267.94	3265.50	821.9	74.83	2443.6	523.05	298.85
8	<b>Էրեբունի</b>	3282.4	451.1	86.3	2831.3	314.21	136.88	3220.7	536.58	83.34	2684.1	372.33	164.25
9	<b>Արտաքաղաք</b>	2552.8	507.4	80.1	2045.4	244.94	262.45	2462.2	571.24	76.80	1891.0	452.68	118.56
	<b>Ընդամենը</b>	<b>29326.3</b>	<b>5495.9</b>	<b>81.3</b>	<b>23830.4</b>	<b>3639.33</b>	<b>1856.59</b>	<b>28758.60</b>	<b>7489.41.</b>	<b>73.96</b>	<b>21269.19</b>	<b>6024.96</b>	<b>1464.45</b>

Ուսումնասիրությունից պարզվեց (աղյուսակ 3), որ.

- 2005 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ընկերության սպասարկման փարածք մուտք գործած ջրաքանակը 2004 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 6 402 200 խոր.մ –ով, սակայն 20 մլն. խոր.մ. ավելի է, քան ներառված է սակագնում:
- նույն ժամանակահատվածում հաշվառված ջրաքանակը պակասել է 1 985 910 խոր.մ-ով. որից բնակիչ բաժանորդների մոտ՝ 1 644 070 խոր.մ.,
- նույն ժամանակահատվածում կորուստները 2004թ նկատմամբ նվազել են 4 416 200 խոր.մ-ով, այն դեպքում, երբ սակագնում ներառված կորստի մեծությունը գերազանցվել է մոտ 28 մլն. խոր. մ-ով (փաստացին՝ 158476.8 հազ.խոր.մ, սակագնում ներառվածը՝ 130550.0 հազ.խոր.մ):
- կորուստը 2004թ 80.93%-ից 2005թ դարձել է 81,3%:

Եթե 2004թ. փվյալ ժամանակահատվածում 302749 բնակիչ բաժանորդները՝ ներառյալ 40444 ջրաչափեր չտեղադրածները գումարային սպառել են 38379910 խմ՝ յուրաքանչյուրը մոտ 126 խմ, ապա 2005թ նույն ժամանակահատվածում համապարասխանաբար 36394000 խմ և 118 խմ (ջրաչափ չեն տեղադրել 31928-ը):

Ջրի սպառման ծավալների փոփոխությունը առավել ցայտուն է 2004թ և 2005թ հուլիս ամիսների ջրային հաշվեկշիռների համեմատության դեպքում:

Ինչպես երևում է աղյուսակ 3.1-ից.

- 2005 թվականի հուլիս ամսին ընկերության սպասարկման փարածք մուտք գործած ջրաքանակը 2004թ. նույն ամսի նկատմամբ ավելացել է 567 700 խոր.մով,
- հաշվառված ջրաքանակը նվազել է 1 993 510 խոր.մ-ով: Ընդ որում բնակիչ բաժանորդների մոտ նվազել է 2 385 630 խմ-ով (այլ բաժանորդների մոտ ավելացել է 392 140 խոր.մ-ով):
- կորուստը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 2561.21 հազ խոր. մ-ով, իսկ սակագնում ներառվածի նկատմամբ՝ 5180.4 հազ. խոր. մ.-ով
- կորուստը մուտքի նկատմամբ 73.96%-ից դարձել է 81,3%:

Այսպեղ նույնպես մեր գնահատմամբ սպառման ծավալների նվազումը նաև ջրամատակարարման գրաֆիկների խախտման հետևանք է:

Միաժամանակ նշենք, որ բնակիչ բաժանորդների թիվը 2004 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 3445 բաժանորդով:

Ընկերության ներկայացրած տեղեկատվությունը բաժանորդների վերաբերյալ ներկայացված է աղյուսակ 4-ում.

**աղյուսակ 4**

№	Մասնա- ճյուղ	Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ն Ե Ր			
		ընդամենը	բնակիչ-բաժանորդներ		
			քան.	ջրաչափ տեղադրած	
1	2	3	4	6	%
1	Նյուսիս	53129	51711	47834	93
2	Կենտրոն	38389	35 538	30598	86
3	Մաշտոց	41324	40168	37502	93
4	Քանառաքեռ Զեյթուն	22270	21506	19610	92
5	Էրեբունի	30359	29355	24917	85
6	Շահումյան	35207	34274	31802	92
7	Արաբկիր	44649	42496	37889	89
8	Շենգավիթ	35974	34485	30310	88
9	Արտաքաղ.	17009	16661	9204	55
<b>ԸՆ ԴԱՄԵՆԸ</b>		<b>318310</b>	<b>306194</b>	<b>274266</b>	<b>89.6</b>

Նամաձայն Երևանի «Զրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի 14.07.2005թ. ներկայացրած № ա/հ տեղեկանքի, 2005 թվականի հունվարի 1-ից առ 14.07.2005թ. ժամանակահատվածում սպառողներին անվճար խմելու ջուր չի փրամադրվել՝ քանի որ ջրամատակարարման համակարգում վթարների վերացման և պլանային աշխատանքների կատարման ժամկետը չի գերազանցել համապատասխանորեն 36 և 24 ժամերը: Չեն կատարվել նաև վերահաշվարկներ թերմատակարարված ջրի դիմաց: Նամաձայն տեղեկանքի ընկերությունն ունի բոլոր հնարավորությունները անհրաժեշտության դեպքում բաժանորդներին անվճար խմելու ջրով ապահովելու համար (հավելված 9):

Սակայն մոնիթորինգի ընթացքում աշխատանքային խումբն արձանագրեց վթարների վերացման և ջրամատակարարման գրաֆիկների խախտման փոփոխության հետ կապված

փաստեր, որոնք, մեր գնահատմամբ, համաձայն խմելու ջրի մաքրակարարման և ջրահեռացման կանոնների 46.1 կետի և նվազագույն պահանջների 1-ին և 8-րդ կետերի, հիմք են հանդիսանում ջրի վարձավճարների վերահաշվարկի համար: Դրանք են՝

1. Արշակունյաց 50, 48/3 շենքերի բնակիչներից սրացված դիմում-բողոքները (հավելված 10), որոնց կապակցությամբ ս.թ. օգոստոսի 26-ին աշխատանքային խմբի և Շենգավիթ մասնաճյուղի արտադրատեխնիկական բաժնի պետի մասնակցությամբ Կրեդիտ Բանկի մասնաճյուղի ղեկավարությանը հարկադրաբար իրավիճակը: Փաստվեց, որ ամռան ամիսներին (հուլիս-օգոստոս) նշված շենքերի 2-րդ հարկից բարձր ջրամաքակարարումը իրականացվում է միայն գիշերային ժամերին 24<sup>00</sup>-ից մինչև 6<sup>00</sup> ընկած ժամանակահատվածում, իսկ 4-րդ հարկում էլ ավելի վաղ: Մասնաճյուղի ղեկավարությունը և մասնագետները իրավիճակին լավատեղյակ էին:
2. Մարզարյան 2-րդ նրբանցքի 1/1 շենքի բնակիչների դիմում բողոքը, որի կապակցությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ դիմում-բողոքում բերված փաստերը համապատասխանում են իրականությանը:
3. Նալբաթյան փողոցի երկայնքով ընկած ջրարարի ս.թ. հունիսի 22-ից հուլիսի 22-ը Կրեդիտ Բանկի մասնաճյուղի հետևանքով պարբերաբար ջրամաքակարարման ընդհատումների և անորակ ջրամաքակարարման վերը նշված փաստերը:

Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի քիմիկա-մանրէաբանական լաբորատորիան իր աշխատանքներն իրականացնում է համաձայն ընկերության գլխավոր տնօրենի կողմից հաստատված և ՆՏ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ համաձայնեցված փարեկան աշխատանքային պլանի (հավելված 70):

Պլանային աշխատանքների կատարման վերաբերյալ գրառումները կատարվում են համապատասխան մատյաններում՝

1. Ջրամբարների ֆիզիկա-քիմիական անալիզների գրանցման,
2. Ջրաղբյուրների անալիզների գրանցման,
3. Նեռախոսագրերի գրանցման մատյան (այսպես գրանցվում են այն հեռախոսագրերը, որոնցով յուրաքանչյուր օր տեղեկացվում է ընկերության ղեկավարությանը կատարված անալիզների արդյունքների մասին),
4. Զրոյի դոզավորման հաշվարկման մատյան:

Բացի վերը նշվածից լաբորատորիան վարում է ոչ պլանային անալիզների մատյան, որում գրանցվում են ինչպես ընկերության մասնաճյուղերից, այնպես էլ սպառողների ահազանգերի հիման վրա կատարված անալիզների արդյունքները: Մակայն, ինչպես պարզվեց լաբորատորիայի գործառնությունների շուրջ կայացած քննարկումից, ընկերության լաբորատորիայի և մասնաճյուղերի փոխհարաբերությունները, ինչպես նաև սպառողների իրավասությունները լաբորատորիայի ծառայություններից օգտվելու



առումով, որն է փաստաթղթով կանոնակարգված չեն: Բացակայում է վթարների հայրնաբերման և վերացման ընթացքում ընկերության մասնաճյուղի, քիմիկամանրէաբանական լաբորատորիայի փոխգործակցության, ինչպես նաև բաժանորդների բողոքների փաստով ջրի նմուշների հետազոտման, արդյունքների գրանցման, տեղեկացման հստակ միասնական կարգը: Վերը նշված ոչ պլանային անալիզների մատչանում գրառումները կարարվում են ոչ կանոնակարգված ձևով: Նշենք նաև, որ մոնիթորինգի ավարտին աշխատանքային խմբին ներկայացվեց «Երևանի «Զրմուղ-Կոյուղի» ՓԲԸ լաբորատորիայի աշխատանքային կանոնակարգը» լաբորատորիայի վարիչ փոխ Ս. Ասատրյանի ստորագրությամբ, առանց որն է վավերացման և ամսաթվի, որը չի կարող հավակնել փաստաթուղթ կոչվելուն (հավելված 11):

Նշված կարգի բացակայությունը ցայտուն արտահայտվեց ս.թ. հունիս-հուլիս ամիսներին Նալաբյան փողոցի 39, 37, 45 շենքերից աղտոտվածության կասկածով բերված ջրի նմուշների լաբորատոր հետազոտության արդյունքները ուսումնասիրելիս: Մաքյաններից պարզ չէր, թե ով է բերել նմուշը, որ ժամին, անալիզի արդյունքներն ինչպիսին են, ում և երբ են տեղեկացրել անալիզի արդյունքների մասին:

Նամադրելով լաբորատորիայի, Մաշտոց մասնաճյուղի և բաժանորդների (Նալաբյան 39 շենքի) կողմից աշխատանքային խմբին փրամադրած տեղեկանքները (հավելված 13), որոնցում նշված են հունիս-հուլիս ամիսներին տեղի ունեցած վթարների փարբեր ամսաթվեր, վերականգնման փուլության փարբեր ժամկետներ, ջրի պիտանելիության վերաբերյալ հակասական տեղեկատվություն, միանշանակ կարելի է եզրակացնել ընկերության լաբորատորիայի, մասնաճյուղի և ինչպես երևում է ՊՆՆՎ տեսչության 24.08.05թ. թիվ 04-554/33 գրությունից (հավելված 12), տեսչության փարածքային ստորաբաժանումների միջև «Սանիտարական նորմեր և կանոններով» նախատեսված համագործակցության ոչ պարզաճանակարգակի մասին: Վերը նշված ժամանակահատվածում Նալաբյան փողոցի վրա (ըստ Մաշտոց մասնաճյուղի 21.07.05թ. տեղեկանքի) գրանցվել է երեք վթար (հավելված 13): Սակայն ՊՆՆՎ Աջափնյակի փարածքային կենտրոնին տեղեկացվել է միայն հունիսի 22-ից 23-ը տեղի ունեցած վթարի մասին, այն էլ հունիսի 30-ին որպես վերացված վթար: Ներկայումս, ինչպես ընկերության մասնաճյուղի, այնպես էլ քիմիկա-մանրէաբանական լաբորատորիայի կողմից խախտվել է N2-III-ԱԶ-1 «Սանիտարական նորմեր և կանոններ»-ի 2.3 կետի պահանջը:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն Նալաբյան փողոցի ջրամատակարարման ոչ պարզաճանակարգակի վերաբերյալ ոչինչ չհայտնելով Նանձնաժողովին, խախտել է ՏՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հունիսի 8-ի թիվ 67Ա որոշմամբ Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին տրված ջրային համակարգի թույլտվության պայմանների (Թույլտվություն N0001)

5.32 կերի պահանջը, որի համաձայն Անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Նանձնաժողով հայրնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլբնության պայմանների խախտմանը: Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ն անգամ չի արձագանքել սույն թվականի հուլիսի 6-ին Նանձնաժողովի կողմից ընկերության գլխավոր փնտրեն Գ. Ալեքսանյանին հասցեագրված թիվ 12 հեռախոսագրին (հավելված 14):

Քիմիկամանրեաբանական լաբորատորիայի հիմնական գործառնություններից է ՕԿՁ-ների վնասումից հետո ջրի քիմիկա-մանրեաբանական հետազոտությունների կատարումը: Չնայած այն հանգամանքին, որ ընկերության գրասենյակում առկա էր գլխավոր փնտրենի կողմից հաստատված 2004թ. «Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրամբարների վնասման և վարակազերծման գրաֆիկ»-ը, լաբորատորիայում չհայտնաբերվեց որևէ գրառում ոչ 2004թ., ոչ էլ 2005թ. յոթ ամիսների ընթացքում այդ աշխատանքների կատարման ավարտը փաստելու վերաբերյալ (հավելված 15):

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել է բակային պոմպերի էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ Երևանի «Ջրնուղ-կայուղի» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունը: Նամաձայն տեղեկատվության, 2005 թվականի առաջին եռամսյակում բակային պոմպերի էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 3, 02 մլն կՎտժ, իսկ երկրորդ եռամսյակում՝ 2, 85 մլն կՎտժ: Նույն ամսվա ծախսը կազմել է 1, 01 մլն կՎտժ: 7 ամսվա տվյալներով բակային պոմպերի էլեկտրաէներգիայի միջին ամսական ծախսը կազմում է 0,98 մլն կՎտժ: Այս ցուցանիշների հիման վրա կարելի է գրակացնել, որ 2005 թվականի համար Երևանի «Ջրնուղ-կայուղի» ՓԲԸ-ի բակային պոմպերի էլեկտրաէներգիայի ծախսը չի գերազանցի 12 մլն կՎտժ-ը՝ սակազնի հաշվարկում ներառված 16,5 մլն կՎտժ-ի դիմաց: 4,5 մլն կՎտժ էլեկտրաէներգիայի «տնտեսումը» առաջանում է բակային պոմպերի աշխատանքային գրաֆիկով նախատեսված ժամերի նվազեցման կամ ընդհանրապես չմիացնելու պատճառով: Մասնավորապես, հունիս-հուլիս ամիսներին ընդհանրապես չեն աշխատել 82 բակային պոմպ: Մեր գնահատմամբ էլեկտրաէներգիայի նման «տնտեսումն» է հիմնական պատճառը, որ մի շարք շենքերի վերին հարկերի բնակիչների ջրամատակարարումը անկանոն է իրականացվել: Մասնավորապես, սույն թվականի հունիս-հուլիս ամիսներին նման իրավիճակում են հայտնվել Արշակունյաց 50, Արզումանյան 4 և Ծիրակի 21 շենքերի բնակիչները: Մոնիթորինգի խմբի միջամտությունից հետո են միացվել այդ շենքերի ջրամատակարարումը ապահովող պոմպերը, որից հետո շենքերի վերին հարկերի բնակիչները ջուր են ստացել:

Միաժամանակ նշենք, որ աշխատանքային խմբի միջամտությունից հետո օգոստոսի 26-ից բարելավվել է Արշակունյաց 50 շենքի (պոմպի միացման շնորհիվ) և օգոստոսի 28-ից Մարգարյան 1/1 շենքի ջրամատակարարումը:

**Երևանի «Ջրնուդ-կոյուդի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող  
պարաոմբներում իրականացված մոնիթորինգի արդյունքները ըստ  
մասնաճյուղերի**

**I. « Կենտրոն» մասնաճյուղ**

«Կենտրոն» մասնաճյուղը սպասարկում է «Կենտրոն» համայնքը:

Մասնաճյուղը սպասարկում է **35538** բնակիչ-բաժանորդների և **2851**

իրավաբանական անձանց:

Ըստ մասնաճյուղի ներկայացրած 2005 թվականի 1-ին կիսամյակի տվյալների կորուստները կազմում են **79,7 %**:

Բնակիչ-բաժանորդների **48,7 %** -ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Ամբողջ ջրաքանակը տրվում է ինքնահոս եղանակով: Որպես սպառում հաշվառվել է **3120500** խոր.մ:

2004թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ կորուստներն աճել են **0.6%** -ով՝ տարածք մուտք գործած **24540500 խոր.մ** ջրաքանակի պայմաններում, ինչը 2445600 խոր.մ-ով ավելի է 2004թ. նույն ժամանակահատվածում մասնաճյուղ մուտք գործած ջրաքանակից:

Այլ մասնաճյուղերից ջրաքանակների սրացում և փոխանցում այլ մասնաճյուղերի չի իրականացվում:

Նրապարակված գրաֆիկներում կատարվել են փոփոխություններ, որոնց մասին, ըստ ներկայացված տեղեկանքի, բաժանորդները տեղեկացվել են լրարվամիջոցներով (հավելված 16)(*Պահանջներ, 3-րդ կետ*):

Վթարների, ահազանգերի և բողոքների գրանցամատյանից պարզենահանվել է հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին բնակիչներից հեռախոսազանգի միջոցով գրանցված ահազանգերը (հավելված 17):

Դիտարկված հասցեներում մեր կողմից կատարված հարցումները ցույց են տալիս, որ բաժանորդները հիմնականում (**95%**) տեղյակ չեն ջրամատակարարման գրաֆիկներում կատարված փոփոխությունների մասին:

Տեղում կատարվել են **49** ուսումնասիրություններ, որոնց ժամանակ բաժանորդներն իրազեկվել են իրենց շենքի ջրամատակարարման գրաֆիկների մասին (հավելված 18): Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բաժանորդների **80-90 %** -ը տեղյակ չէր իրենց շենքի ջրամատակարարման գրաֆիկների մասին:

Այցելություններին հաջորդող օրերի ընթացքում այն հասցեներում, որտեղ հայրնաբերվել են սպասարկման որակի նվազագույն պահանջների խախտումներ, հեռախոսազանգերով ճշտվել են խմելու ջրի մաքակարարման հետ կապված փոփոխությունները (հավելված 19): Դիտարկված 49 հասցեներում 6-ն ունեն շուրջօրյա ջրամաքակարարում, որից բոլորում էլ այն պահպանվում է: 49 հասցեներից 20-ում կային նվազագույն պահանջների խախտումներ (աղյուսակ 5), որոնց քանակը այցելություններին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում դարձավ 12 (հավելված 20):

**աղյուսակ 5**

Մ/ճ-ի Անվանումը	Ընդամենը դիտարկված հասցեների քանակը	Նամապա քառ խանում է գրաֆիկին		Չի համապարասխանում գրաֆիկին				Շուրջօրյա գրաֆիկ				
				ընդամենը		այդ թվում 4 ժամից պակաս ջրամաքակարարմամբ		դիտարկված հասցեներ	Շուրջօրյա գրաֆիկին համապարաս խանում է		Շուրջօրյա գրաֆիկին չի համապարաս խանում	
1	2	3		4		5		6		7		
Կենտրոն	49	Քա նակ	%	Քա նակ	%	Քա նակ	%	Քա նակ	Քա նակ	%	Քա նակ	%
				29	59	20	41	0	0	6	6	100

Վերջինիս նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով մասնաճյուղի ղեկավարությունը գրավոր տեղեկացվել է: Նշված 12 բաժանորդների վերաբերյալ «Կենտրոն» մասնաճյուղի կողմից, ըստ փնտրենի կողմից ներկայացված գրության, կատարվել են ուսումնասիրություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձրահարկ շենքերը սնող պոմպերի ռելե-ժամացույցների անխափան աշխատանքին, ջրի որակին, գրաֆիկների պահպանմանը (հավելված 21): Մեր կողմից հեռախոսազանգերով պարզվեց, որ 12 հասցեներից 4-ում բարելավվում չի եղել, մնացած 8 հասցեներում վիճակը նորմալացել է:

2004-2005թթ հունվար-հուլիս ամիսների ընկերության ներկայացված արդյունքները, ինչպես նաև շուրջօրյա ջրամաքակարարման վերաբերյալ փյալների համեմատությունը բերված է աղյուսակ 6-ում:

**աղյուսակ 6**

Բնակիչ բաժանորդների քանակը			Խոնելու ջրի կորուստները %			Շուրջօրյա ջրամաբակարարումը %	
2004թ.	2005թ.	ավելացել է	2004թ.	2005թ.	ավելացել է	2004թ.	2005թ.
35392	35538	146	79,1	81,0	1,9	35	48,8

Ըստ մասնաճյուղի կողմից փրված փեղեկափության պլանային աշխատանքների կատարման դեպքում ԶԼՄ-ներով փրվում են հաղորդագրություններ, որտեղ նշվում են կատարվելիք աշխատանքների սկիզբն ու ավարտը (***Պահանջներ, 6-րդ կետ***):

Մասնաճյուղում 2005թ. հունվար- հունիս ամիսներին իրականացվել է 4 խոշոր վթարների վերացման աշխատանքները, որոնց ժամանակ 36 ժամը գերազանցող ժամանակահատված չի գրանցվել, հետևաբար այլընտրանքային ջրամաբակարարում չի իրականացվել և թերմաբակարարված ջրի դիմաց սպառողների՝ փվյալ ամվա վճարման ենթակա գումարի նվազեցում չի կատարվել (***Պահանջներ, 7-րդ 8-րդ կետեր***): Բնակչությանը իրազեկելու հարցը, ըստ մասնաճյուղի կողմից ներկայացված փեղեկանքի, իրականացվում է լրատվական միջոցներով և համափիրություններում փակցված հայտարարություններով:

«Կենտրոն» մասնաճյուղում 2005թ. հունվար-հունիս ամիսներին կատարվել է **183** պլանային աշխատանք, որոնց ժամանակ 24 ժամը գերազանցող ջրամաբակարարման ընդհատում չի գրանցվել (***Պահանջներ, 6-րդ կետ***): Այցելություն կատարած շենքերից որևէ մեկի մուտքում վթարի և դրա վերացման փնտրության մասին փեղեկափություն փակցված չի եղել: Պլանային աշխատանքների ժամանակ բաժանորդներն իրազեկվել են Ն1 և Ն2 հեռուստաընկերությունների կողմից հեռարձակված հայտարարություններով (***Պահանջներ, 6-րդ կետ***):

Վթարների ժամանակ մասնաճյուղը ՆՆ պետական հիգիենիկ համաճարակային ծառայությանը և Երևանի «Զրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ի կենտրոնական գրասենյակին փեղեկացնում է հեռախոսագրերով, սակայն այդ մասին բաժանորդներին իրազեկում է հազվադեպ:

Ինչպես երևում է վերը բերված տվյալներից և մեկնաբանություններից, ինչպես նաև հանձնաժողով ներկայացրած՝ ընկերության 2004-2005թ.թ հաշվետվություններից, մասնաճյուղում տվյալ ժամանակահատվածում կորուստներն աճել են 1.9%-ով: Բաժանորդների մոտ սահմանված գրաֆիկների խախտման և ջրի ճնշման սահմանված մեծությունների չապահովման դեպքերը փարածքի որոշ հատվածներում (Նալբանդյան փողոց, Բյուզանդի փողոց, Կիլիկիա թաղամաս) կրում են խրոնիկական բնույթ: Լուրջ թերություններ կան բաժանորդների իրազեկման և հեղուկարձ կապի ապահովման հարցերում:

## **II. «Նյուսիս» մասնաճյուղ**

«Նյուսիս» մասնաճյուղը սպասարկում է Նոր-Նորք, Ավան և Նորք-Մարաշ համայնքները, Կոպայքի մարզի Ջրվեժ գյուղը:

Մասնաճյուղը սպասարկում է **51711** բնակիչ-բաժանորդների և **1418** իրավաբանական անձանց: Բաժանորդների քանակով «Նյուսիս»-ը ամենամեծ մասնաճյուղն է:

Կորուստները, ըստ մասնաճյուղի կողմից ներկայացրած տեղեկանքի, կազմում են **17603400** խոր.մ. կամ **81.4** %:

Սպասարկման փարածք 2005թ հունվար-հունիս ամիսներին մուտք է գործել մոտ **21633800** խոր.մ ջուր:

Որպես սպառում հաշվառվել է միայն **4 030 400** խոր.մ:

Բնակիչ-բաժանորդների **69,1** % -ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Մասնաճյուղում 2005թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում **36** ժամ փակման և դրան գերազանցող վթար չի գրանցվել, հեղուկաբար այլընտրանքային ջրամատակարարում չի իրականացվել և թերմատակարարված ջրի դիմաց սպառողների տվյալ ամսվա վճարման ենթակա գումարի նվազեցում չի կատարվել (հավելված 22): *(Պահանջներ, 8-րդ կետ)*

«Նյուսիս» մասնաճյուղում 2005թ. հունվար-հունիս ամիսներին կատարվել է **2** պլանային աշխատանք, իսկ խոշոր վթարներ չեն գրանցվել: Պլանային աշխատանքների ժամանակ բաժանորդներն իրազեկվել են Ն1 և Ն2 հեռուստա-ընկերությունների կողմից հեռարձակված հայտարարություններով: Վթարների ժամանակ մասնաճյուղը պետական հիգիենիկ համաճարակային ծառայությանը և Երևանի «Ջրնուղ-Կոյուղի» ՓԲԸ-ի կենտրոնական գրասենյակին տեղեկացնում է հեռախոսագրերով:

Պլանային աշխարանքների կատարման դեպքում ՋԼՄ-ներով փրվում են հաղորդագրություններ, որտեղ նշվում են կատարվելիք աշխարանքների սկիզբն ու ավարտը (**Պահանջներ, 6-րդ կետ**):

2005թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում «Նյուսիս» մասնաճյուղի Մարաշի օրվա կարգավորիչ ջրամբարի (ՕԿՁ) սնուցող ջրաբարից «Էրեբունի» մասնաճյուղի սպասարկման փակ գրնվող Սարի թաղի ՕԿՁ-ն մաքակարարվել է **47 000 խոր.մ**, իսկ մայիսի 1-ից հունիսի 1-ը՝ **44 000 խոր.մ** ջուր:

Նրապարակված գրաֆիկներում կատարվել են փոփոխություններ, որոնց մասին, ըստ ներկայացված փեղեկանքի, բաժանորդները փեղեկացվել են համայնքապետների կամ մենեջերների միջոցով(**Պահանջներ, 3-րդ կետ**): Դիտարկված հասցեներում մեր կողմից կատարված հարցումների արդյունքները ցույց փվեցին, որ բաժանորդները հիմնականում (95%) փեղյակ չեն ջրամաքակարարման գրաֆիկներում կատարված փոփոխությունների մասին:

Վթարների, ահազանգերի և բողոքների գրանցամատյանից պարճենահանվել է հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին բնակիչներից հեռախոսազանգի միջոցով գրանցված ահազանգերը (հավելված 23):

Տեղում կատարվել են 65 ուսումնասիրություններ, որի ժամանակ բաժանորդներն իրազեկվել են իրենց շենքի ջրամաքակարարման գրաֆիկների մասին (հավելված 24): Ուսումնասիրությունը ցույց փվեց, որ բաժանորդների իրազեկման կիրառվող ձևերը արդյունավետ չեն: Բաժանորդների գերակշիռ մասը չգիտեն իրենց շենքի ջրամաքակարարման գրաֆիկների մասին:

Այցելություններին հաջորդող օրերի ընթացքում այն հասցեներում, որտեղ հայրնաբերվել են սպասարկման որակի նվազագույն պահանջների խախտումներ, հեռախոսազանգերով ճշրվել են խմելու ջրի մաքակարարման հետ կապված վիճակի փոփոխությունները (հավելված 25): Դիտարկված 65 հասցեներում 23-ն ունեն շուրջօրյա ջրամաքակարարում, որից 20-ում այն պահպանվում է, իսկ 3-ում՝ մասամբ խախտվում: 65 հասցեներից 29-ում կային նվազագույն պահանջների խախտումներ, որոնց քանակը այցելություններին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում դարձավ 6 (հավելված 26): Վերջինիս նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով մասնաճյուղի ղեկավարությունը գրավոր փեղեկացվել է: 6 հասցեներից 4-ը վերաբերվում է Նորք -Մարաշ համայնքին, 2-ը՝ Նոր-Նորքի 1-ին զանգվածին, որոնց վերաբերյալ մասնաճյուղի փնտրենը ներկայացրել է գրավոր հիմնավորում, ըստ որի ջրամաքակարարման գրաֆիկների խախտումները կրում են սեզոնային բնույթ (հավելված 27): Մասնաճյուղում ստեղծվել է աշխարանքային խումբ, որը պայքարում է ապօրինի ջրօգտագործման և ջրի շռայլման դեմ: Օգոստոս ամսին հայրնաբերվել և

ակտիվորվել է ապօրինի ջրօգտագործման 24 դեպք, և այդ աշխատանքները շարունակվում են:

Ձեռնարկված միջոցառումները, ըստ մեր դիտարկումների, բավարար չեն, քանի որ մեկ ամսվա ընթացքում Նորք-Մարաշ համայնքում, որտեղ բացառապես առանձնատներ են, ջրամատակարարման գրաֆիկների և ճնշման առումով դիտարկված հասցեներում բարելավում չի գրանցվել:

**աղյուսակ 7**

Մ/ճ-ի Անվանումը	Ընդամենը դիտարկված հասցեների քանակը	Նամապարաստ խանութ է գրաֆիկին		Չի համապատասխանում գրաֆիկին				Շուրջօրյա գրաֆիկ				
				ընդամենը		այդ թվում 4 ժամից պակաս ջրամատակարարմամբ		դիտարկված հասցեներ	Շուրջօրյա գրաֆիկին համապատասխանում է		Շուրջօրյա գրաֆիկին չի համապատասխանում	
1	2	3		4		5		6			7	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	Քանակ	%	Քանակ	%
Նյուսիս	65	36	55	29	45	0	0	23	20	87	3	13

2004-2005թթ հունվար-հուլիս ամիսների ընկերության ներկայացված արդյունքները, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարման վերաբերյալ տվյալների համեմատությունը բերված է աղյուսակ 8-ում:

**աղյուսակ 8**

Բնակիչ բաժանորդների քանակը			Խմելու ջրի կորուստները %			Շուրջօրյա ջրամատակարարումը %	
2004թ.	2005թ.	ավելացել է	2004թ.	2005թ.	նվազել է	2004թ.	2005թ.
51079	51711	632	80.63	79.5	1.13	70.6	69

Նորք-Մարաշ համայնքում և 4-րդ զանգվածի բարձրադիր մասերում ճնշման շեղումները սահմանված նվազագույն պահանջներից խրոնիկական բնույթ են կրում:



Ինչպես երևում է վերը նշված փվյալներից և նախորդ մոնիթորինգի համեմատական վերլուծությունից, առկա է փեխնիկական ցուցանիշների վարթարացում՝ կորուստներն ավելացել են 14%, իսկ շուրջօրյա ջրամատակարարում սրացող բաժանորդների քանակը նվազել է: Չկան փոփոխություններ բաժանորդներին իրագեկման, հեփադարձ կապի բարելավման ուղղությամբ:

«Վալենսիա» հյուրանոցային համալիրն ունի խմելու ջրի մատակարարում «Քանաքեռ-Զեյթուն», ինչպես նաև «Նյուսիս» մասնաճյուղերից: 2005 թվականի հունվար-հունիս ամիսներին «Վալենսիա» ՆՁ ՍՊԸ-ն Քանաքեռ-Զեյթունի ջրագծից մատակարարում չի սրացել: Մոնիթորինգի անցկացման պահին հաշվիչը չէր աշխատում՝ այդ գծի վրա դրված փականը փակ էր և սահմանված կարգով պլոմբած:

«Նյուսիս» ջրագծից սրացված խմելու ջրի ծախսը մայիսի 29-ի փվյալներով կազմում է 150խոր.մ., հուլիսի 29-ի փվյալներով՝ 400 խոր.մ. և օգոստոսի 27-ի փվյալներով՝ 1881 խոր.մ: Ըստ «Վալենսիա» ՆՁ ՍՊԸ-ի փնօրինության կողմից փված փեղեկափության, ջրաշխարհի արփադրական գործունեության համար ջուրը վերցվում է սեփական յոթը արփեգյան հորորից, որոնց համար ունեն Նայասրանի Նանրապեփության բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից 2004 թվականի հունիսի 8-ին փրված № 0313 ջրօգփագործման թույլփությունը:

### III. «Մաշփոց» մասնաճյուղ

Մասնաճյուղը սպասարկում է Աջափնյակ և Դավիթաշեն համայնքները: Մասնաճյուղն ունի **40 168** բնակիչ-բաժանորդներ և **1156** իրավաբանական անձ բաժանորդներ:

Մասնաճյուղում ջրի կորուստները հունվար-հուլիս ամիսներին կազմել է 21196600խոր.մ. կամ 86%:

Ըստ մասնաճյուղի փեղեկափության բնակիչ բաժանորդների մոտ 67,52%-ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ (հավելված 28):

Մասնաճյուղում 2005թ. մայիս-հուլիս ամիսներին իրականացվել է 6 պլանային և 8 խոշոր վթարների վերացման աշխատանքներ, որոնց ժամանակ 24-36 ժամ գերազանցող ժամանակահատված չի գրանցվել, հեփաբար այլընփրանքային ջրամատակարարում չի իրականացվել և թերմատակարարված ջրի դիմաց սպառողների փվյալ ամսվա վճարման ենթակա գումարի նվազեցում չի կափարվել:

Վթարների և պլանային աշխատանքների կափարման մասին բաժանորդներն իրագեկվում են հեռուսփափեսության, առևփրային մենեջերների, շենքերի մուփքերի փակցվող հայփարարությունների միջոցով:

Մասնաճյուղի ղեկավարության հետ նախօրոք ուսումնասիրվել է շահագործման փարաձքը: Կարարվել է փարաձքի բաժանում ըստ ջրամաքակարարման նույն գրաֆիկի, որոնցում ընդգրկելով եղած բողոքները ինչպես նաև բնութագրական այլ հասցեներ (բազմաբնակարան շենքեր և առանձնատներ), կարարվել են հարցումներ (հավելված 29): Մասնաճյուղի համար կազմվել է հարցման արդյունքների ամփոփ աղյուսակ՝ բաժանորդների հեռախոսահամարներով (հավելված 30): Այնուհետև հարցման արդյունքները ճշգրտվել են փարբեր օրերին կարարված հեռախոսազանգերի միջոցով (հավելված 31): Սրացված տեղեկատվության վերլուծության հիման վրա առանձնացվել են այն հասցեները, որտեղ ջրամաքակարարումը կարել է համարել «խրոնիկ» վար, ինչի մասին տեղյակ են պահվել մասնաճյուղին (հավելված 32): Մասնաճյուղից սրացված պատասխանում նշվել են ներկայացված հասցեների ջրամաքակարարման նորմալացմանը ուղղված աշխատանքները, ինչպես նաև այն հասցեները, որտեղ ջրամաքակարարման գրաֆիկն արդեն վերականգնվել է (հավելված 33):

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են Նալբեյան, Բաշինջաղյան, Շիրազի, Միսակյան, Արզումանյան, Մարգարյան, Շինարարների, Ֆուչիկի, Լենինգրադյան փողոցների, Գ-3, 16-րդ, Դավիթաշեն թաղամասերի ինչպես նաև Զասախ գյուղի ջրամաքակարարումը: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվել է 145 հասցեների ջրամաքակարարումը: Այնուհետև, վերլուծելով սրացված տեղեկատվությունը (օրինակ այն հասցեներից, որոնք գրնվելով նույն աստիճանավանդակում, ունեին նույն խնդիրը, հերագա դիտարկման համար ընտրվել է մեկը), ընտրվել են 63-ը և գրանցվել են տեղեկատվական մշակման համար նախատեսված աղյուսակում: Այնուհետև այդ աղյուսակում գրանցվել են նաև բնակիչներից հեռախոսային հարցումներից սրացված տեղեկությունները: Վերջնական ձևավորված աղյուսակի վերլուծությունից պարզվել է հետևյալը.

Ուսումնասիրության արդյունքները բերված են աղյուսակ 9-ում:

աղյուսակ 9

Մ/Ճ-ի անվ.	Ընդամենը դի փարկ ված հասցեների քանակը	Նամապա րաս խանում է գրաֆիկին		Չի համապարասխանում գրաֆիկին				Շուրջօրյա գրաֆիկ					
				ընդամենը		այդ թվում 4 ժամից պակաս ջրամապարակարարմամբ		դի փարկ ված հասցեներ	գրաֆիկին համապարաս խանում է		գրաֆիկին չի համապարաս խանում		
1	2	3		4				5		6		7	
Մաշպոց	63	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	Քանակ	%	Քանակ	Քանակ	%
				20	31,74	43	68,25	19	30,15	25	11	44	14

Պետք է նշել նաև որ որոշ բարձրահարկ շենքերի վերին հարկերում բնակիչները բողոքել են ջրի ցածր ճնշումից (օրինակ Բաշինջաղյան 189): Կար նաև բողոք ջրի որակից (Լենինգրադյան 30):

Ուսումնասիրված փարածքներում ջրի քլորացումը եղել է նորմայի սահմաններում:

2004-2005թթ հունվար-հուլիս ամիսների ընկերության ներկայացված արդյունքները, ինչպես նաև շուրջօրյա ջրամապարակարարման վերաբերյալ փյվյալների համեմափությունը բերված է աղյուսակ 10-ում:

աղյուսակ 10

Բնակիչ բաժանորդների քանակը			Խմելու ջրի կորուստները %			Շուրջօրյա ջրամապակա րարումը %	
2004թ.	2005թ.	ավելա ցել է	2004թ.	2005թ.	ավելա ցել է	2004թ.	2005թ.
39 627	40 168	541	76,71	82,77	6,06	42	67,5

Բնակիչ բաժանորդների քանակը 2004թ. համեմափությամբ ավելացել է 541-ով:

Խմելու ջրի կորուստները 2004թ. համեմափ ավելացել է 6,06%-ով:

Մոնիթորինգի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Լենինգրադյան 30 շենքի ջրամապարակարարման հարցին: Այս շենքի բնակիչները դեռևս 2004 թվականից բողոքում են ջրամապարակարարման գրաֆիկը չպահպանելու վերաբերյալ: Այս հարցով 2004-2005 թ.թ ընթացքում հանձնաժողովում մի քանի անգամ հանդիպումներ է կազմակերպվել Երևանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի և «Մաշպոց» մասնաճյուղի ղեկավարության և Լենինգրադյան 30 շենքի ներկայացուցիչ

Ռ. Ղազանջյանի մասնակցությամբ: ԲՆակիչների բողոքը նրանումն է, որ համաձայն Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի «Ազգ» թերթի 2004 թվականի հուլիսի 8-ի համարում հրապարակված գրաֆիկի, Լենինգրադյան 30 շենքի ջրամաքակարարումը պետք է իրականացվեր 15-ժամյա գրաֆիկով, սակայն նույն թվականի հոկտեմբերի 30-ին հրապարակված գրաֆիկի փոփոխություններում այդ ժամանակը նվազեցվել է 9 ժամով՝ դառնալով 6-ժամյա: Այս մասին 2004 թվականի հոկտեմբեր ամսին հրապարակումներ են եղել նաև «Ազգ» և «Գոլոս Արմենիի» թերթերում: Մամուլում վերջին անգամ այս մասին հրապարակվել է «168 ժամ» շաբաթաթերթում: Չբավարարվելով վերոհիշյալ հարցի վերաբերյալ Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի և «Մաշպոց» մասնաճյուղի ղեկավարության՝ հանձնաժողով ներկայացրած գրավոր պարզաբանումներով (հավելված 34), հանձնաժողովը ս.թ հուլիսի 18-ի №ՌՆ-697 և օգոստոսի 11-ի №ՆԳ-786Լ գրություններով դիմել է ՏՏ ջրային փնտրության պետական կոմիտեին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի հարցի կարգավորման համար, քանի որ ՏՏ կառավարության կողմից նրան է վերապահված Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժնետոմսերի փնտրման լիազորությունները: Սակայն միջև օրս ՏՏ ջրային փնտրության պետական կոմիտեից ոչ մի պարասխան չի սրացվել:

Մոնիթորինգի ընթացքում, ս.թ հուլիսի 23-ին, Լենինգրադյան 30 շենքի 52 բնակարանի ջրամաքակարարման հարցը քննարկվել է տեղում՝ Ռ. Ղազանջյանի, բնակ-կոմունալ ոլորտի աշխատողների միություն հասարակական կազմակերպության նախագահ Ա. Սարգսյանի, «Արձագանք» ռադիոկայանի լրագրող Ա. Բարայանի մասնակցությամբ, ինչի մասին կազմվել է արձանագրություն (հավելված 34): Ռ. Ղազանջյանի կողմից արձանագրվել է, որ 01.07.2004թ.-23.07.2004թ. ջրամաքակարարման փաստացի գրաֆիկը 5-ժամյա է (2 անգամ 2,5 ժամով):

#### **IV. «Քանաքեռ-Զեյթուն» մասնաճյուղ**

«Քանաքեռ-Զեյթուն» մասնաճյուղն սպասարկում է Քանաքեռ-Զեյթուն համայնքը:

Մասնաճյուղն ունի 21 506 բնակիչ-բաժանորդներ և 764 իրավաբանական անձ բաժանորդներ:

Մասնաճյուղում ջրի կորուստները հունվար-հուլիս ամիսներին կազմել են 12 251.000 խոր. մ. կամ 82.1%:

Ըստ մասնաճյուղի կողմից տրված տեղեկանքի բնակիչ բաժանորդների մոտ 37%-ն ապահովված է շուրջօրյա ջրամաքակարարմամբ:

Մասնաճյուղում 2005թ. մայիս-հուլիս ամիսներին իրականացվել է 3 պլանային և 11 խոշոր վթարների վերացման աշխատանքները, որոնց ժամանակ 24-36 ժամ գերազանցող ժամանակահատված չի գրանցվել: Ներկաբար այլընտրանքային

